ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

Կ-278-27.05.2022-ՏՀ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սննդամթերքի անվտանգության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-135-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ~~22.1-րդ~~ 22.1-ին, 22.2-րդ, 22.3-րդ, 22.4-րդ, 22.5-րդ, 22.6-րդ~~, 22.7-րդ և 22.8-րդ~~ կետերով.

~~«22.1) սննդամթերքի հետ շփվող նյութերին և դրանց հայերեն տեղեկատվության մակնշման ձևերին և բովանդակությանը ներկայացվող պահանջների հաստատումը.~~

~~22.2) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի ու սննդային հավելումների վերաբերյալ հայերեն տեղեկատվության մակնշման ձևերին և բովանդակությանը ներկայացվող պահանջների հաստատումը.~~

~~22.3)~~ 22.1) Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում հայտնաբերված՝ մարդու առողջության համար վտանգավոր սննդամթերքի, սննդային հավելումների և սննդամթերքի հետ ~~շփվող~~ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի մասին ծանուցման կարգի հաստատումը.

~~22.4~~) 22.2) արգելված սննդային հավելումների ցանկի հաստատումը.

~~22.5)~~ 22.3) կենդանական ծագման հումքի վարակազերծման կարգի սահմանումը.

~~22.6)~~ 22.4) Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական միության տարածք արտահանվող՝ կենդանական ծագում ունեցող մթերքում մնացորդային նյութերի հսկողության, կենդանական ծագում ունեցող մթերքում անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային առավելագույն քանակների, մնացորդային նյութերի նկատմամբ հսկողության իրականացման համար անհրաժեշտ նմուշառման կարգի հաստատումը.

~~22.7)~~ 22.5) Եվրոպական միության երկրներ արտահանման նպատակով ձկան, ջրային կենդանիների, այլ հիդրոբիոնտների և դրանցից ստացված մթերքների մեջ վտանգավոր նյութերի առավելագույն քանակների հսկողության կանոնների սահմանումը.

~~22.8)~~ 22.6) Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական միության երկրներ արտահանվող մեղրին ներկայացվող պահանջների հաստատումը.

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետում «սննդամթերքի, » բառից հետո լրացնել «սննդային հավելումների,» բառերով:

~~**Հոդված 2.**~~ **Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: